# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 61/357 «09» 02 2015թ.

**«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/11» ծածկագրով**
**գնման ընթացակարգով շրջանակային**
**համաձայնագրեր կնքած մասնակիցներին**

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/11» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնման ընթացակարգի շրջանակներում Երևանի քաղաքապետարանի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրի համաձայն, կից ներկայացվող պայմանագրի նախագծի N1 հավելվածում նշված ապրանքները:

Տեղեկացնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Արգիշտիի 1 հասցեով, N 321/1 սենյակ, Մ. Եղիազարյանին, մինչև 2015թ. փետրվարի 19-ը, ժամը 12:00-ը: Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Հայտերը կբացվեն Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, ք. Երևան, Արգիշտիի 1 հասցեով, N 321/1 սենյակում, 2015թ. փետրվարի 19-ին, ժամը 12:00-ին:

Հայտը ներառում է գնային առաջարկը և մասնակցի գնման ընթացակարգին մասնակցելու մասին դիմումը:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/11» ծածկագրով ընթացակարգի փոփոխված հրավերով սահմանված կարգով (հրապարակված է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում «Շրջանակային համաձայնագրեր» բաժնի «Հրավերներում կատարված փոփոխություններ» ենթաբաժնում):

Ընթացակարգի ծածկագիրն է՝ «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-15/67»:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և գնային առաջարկով ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ**
**ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝** **Ռ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**

Կատ.՝ Մ.Եղիազարյան
հեռ. 514-194